



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 12

Տ Ր Ա Ր Ա Ր

19 ՄԱՐՏ 1905

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳՍԻԱՌԱՅ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ
Տարեկան 50 Ղր.	Տարեկան 54 Ղր.	Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ . . . 25 »	Վեցամսեայ . . . 27 »	Վեցամսեայ . . . 6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՖ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱԺԱՌԱՏՈՒՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐՈՒ, ՇՂԹԱՑՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ

Կ. Պոլիս, Շեքաշ Պեյ խանին սակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն բերել ՍԱՐԳԻՍՕՖ անունը կեղծող կարգ մը նորեղուկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը օրջին :

ՍԱՐԳԻՍՕՖ ժամացոյցները շեքաշապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ԶԵՆԻԹԸ՝ քե՛ Կ. Պոլիս, եւ քե՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գոհացուցիչ պայմաններով :

Ծանօթ. — ԶԵՆԻԹ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանդեսին մէջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են :


Հասը 40 փարս

ԱՐՏՈՆԱՏԵՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(صاريان) مطبعه سی — باب عالی جاده سی ۳۸

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. ՍԱՐԸԵԱՆ

Կ. Պոլիս Պապը-Ալի ճաշեսի րիւ 38



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ՝ բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց և տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Ե Ր

ՀԱՅԹԱԹԻՔ ԿԱՅՍ. ՓԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



Ձեռքի, ոսքի ու ոսքի եւ ձեռքի
միանցամայն մեքենաներ
կը գտնուին

մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործուածը,
հաստատունը և զիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՀԱՐԱԹԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

- | | |
|----------|--|
| ԲՆԲՍ. | (1. Մեծ փողոց, Պօս Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համալ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԱԻԻՏՅԱՐ | (2արշը Պօյու, թիւ 120 . |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաձիւղեր գաւառներու բոլոր ֆաղսֆներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւզդուլուի տունը:

ՑԷՆԻՔԱՍ ՕՔՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵՍԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒՄ 1860 ԻՆ Ի ՎԻԷՆԱ

ԿԵԱՆՔԻ ՃԻՒՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

31,008,000 Ճրանգ

ՀԻՐԵՆԻ ՃԻՒՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

17,000,000 Ճրանգ

- ՑԷՆԻՔԱՍ** Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ չէնք, ապրանք և կարասիք:
- ՑԷՆԻՔԱՍ** Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնը մարդկային կանքի վրայ:
- ՑԷՆԻՔԱՍ** Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ չոգենաւի՝ եւ առաքատանաւի վրայ:

Ընկերութեանս գրամատունն է ՔՐԷՏԻ ԼԻՕՆԷ, Ընդհանուր գործակալութեան գրասենյակին է Պոլիս, Ալեանաք խան, թիւ 11—16:

Ընկերութիւնս կ'ընդունի ի դաւառ պատուաւոր ներկայացուցիչներ:

Լիւպթր Ճերկայացուցիչ
Գ. Յ ՐԱՏԵԱՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱՐԲԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ Թ/ւ 12

ՇԱՐԱՐ

19 Մարտ 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բարեւար Տիկին մը. (Խմբագրական). — ՎԱՀԱՆ ԹՇԻԿԵԱՆ : Վերաբայժ Վսեմ. Տօֆ. ձեմիլ փառայի լուսանկարը: — Յսմուկ իօսֆեր (Հասցէի մը): — Հ. Մ: Հայկ Կիւ. տէնեան եւ իր նուագահանդեսը: — ՄԱՌԿՈՒԻԺ: Յայդերգ մը. — HIRONDELLA: Սիրուն անակնկալ մը (Օրիորդի մը... տասնոցը): Զուարթ ժամեր. — Զ. Մ: Մեռելը չի պաղած (Ժառանգական նօթեր): — ԼԻԼԱ: Կակիծս (բանաստ.): — ԱՆԴՐԱՆԻԿ ԵՍԱՅԵԱՆ: Նախանձը (Թալլօ). — Մ. Ս. ԱԼԱՃԱՃԵԱՆ: 100,00 Տարի Սառնակոյթի մը մէջ. (Հանրագիտակի րեւ. քօնը) LOUIS BOUSSENARD (Թարգմ.) Թ. ՏԷՐ-ՅԱԿՈԲԵԱՆ :

ԲԱՐԵՐԱՐ ՏԻԿԻՆ ՄԸ

Իր տեսակին մէջ գեղեցիկ բարեգործութիւն մըն էր որ Տիկին Սանդուխտ Քէլէկեան կատարեց նախընթաց շաբթու, Սկիւտարի Ս. Խաչ եկեղեցիին Խորհրդարանին մէջ, Ամեն. Ս. Պատրիարք Հօր և Շէրիի դատաւորին ներկայութեանը, ի յիշատակ իր ողբացեալ ամուսնոյն Պօղոս Էֆ. Քէլէկեանի, 4000 ոսկի նուիրելով բարեգործական հաստատութիւններու ի նպաստ:

Օրաթերթերը մանրամասն նկարագրութիւնը ըրած ըլլալով արդէն այս նուիրատուութեան եղանակին ու ձեւակերպութիւններուն, մեզ կը մնայ միայն անոր բարոյական արժէքին վրայ խօսիլ աւելի և բաղդատութիւն մը ընել այս բարեգործութեան և ընդհանրապէս բարերարութեան անունով հռչակուած հրմայող բարեգործութիւններու միջև, որոնց արձագանգը կ'ըլլանք շատ անգամ և որոնք, մեծ մասամբ հեռու են իսկապէս այդ անունով սրակուելէ:

Յաւալին այն է որ արդէն, մեր մէջ դեռ չէ՛ ըմբռնուած բուն բարերարութեան ոգին և չենք վարանիր յաճախ բարերար հռչակել անոնք որոնք իրենց նիւթական անբաւ հարստութիւններէն չնչին մաս մը միայն կը յատկացնեն աղ-

քատին կամ չունեւորին ողորմելու գործին, որ ինքնին պարտականութիւն մը պէտք է նկատուի արդէն նոյն այգ մեծատուններուն համար:

Այսպէս ու է եկեղեցիի մը վարագոյր մը կամ գորգ մը նուիրողը, ու է դպրոցի մը գրասեղանները նորոգողը և կամ իր ու է մէկ դրացիին քանի մը զոյգ գուլպայ և քանի մը ձեռք ալ չըջագետ նուիրողը բարերար կը հռչակուի և բերնէ բերան կը տարածուի այգ մեծ բարերարին անունը, որ ասոնք ընել յանձն առած է, անոր համար միայն որ իր անունը փառաբանուի և ինք, յստորտայ իր նստած տեղը իրեն ընծայուած այս պատիւներէն:

Տարակոյս չկայ թէ ասով ըսել չենք ուզեր որ այդպէս ընողները բարիք մը գործած չեն ըլլար և արժանի չեն ամէն յարգանքի: Ընդհակառակը: Բարիքը միշտ բարիք է, ինչ ձեւի և ինչ եղանակի տակ ալ եղած ըլլայ, ինչ չափով և ինչ աստիճանով ալ նուիրուած ըլլայ: Միայն թէ եթէ ասանկ դոյլն բարեգործութիւնները իբրեւ մեծ բարեգործութիւններ հռչակուին, և անոնց հեղինակները յատուկ տեղ մը գրաւեն բարերարութեան տարեգրութեանց մէջ, բնական է թէ կարեւոր բարեգործութիւնները ա՛լ կը կորսնցնեն իրենց նշանակութիւնը և կը նսեմանան անոնց քով: Եւ ասիկա անոր համար որ՝ տառջինները յանիրաւի խլած կըլլան արդէն երկրորդին արժանի գափնին, ու այս պարագային՝ վերջնոյն տեղ չը մնար ալ՝ արժանի յիշատակութեան մը արժանանալու համար:

Իրաւ է թէ բո՛ւն բարերարները անոնք եղած են մեր մէջ, որոնք իրենց ամբողջ հարստութիւնը բարեգործական հաստատութիւններու յատկացնելով հանդերձ, երբեք չեն խորհած փառաբանութեան վրայ, և օր մը օրանց մշտքերնուն չեն անցուցած թէ ի՞նչպէս կարելի է արդեօք հռչակել իրենց բարեգործութիւնը փողի և թմբուկի ձայներով, և սակայն բարքերը փոխուած են այն օրերէն ի վեր, ու հիմա՝ ամէն բարերար մեծ կամ պզտիկ, կ'սպասէ որ ժողովրդային համակրանքին արժանանայ ու յիշատակուի միշտ՝ իր անունը ժողովուրդին բերնին մէջ, եկեղեցիներու ճակատն ու հաստատութիւններու դուռներուն վրայ արձանագրուի իր անունը և լրագիրները գրուատական տողեր նուիրեն իր հառցէին:

Պահանջը մը որ արդարացի նկատուած է ալ մեզ համար և սովորութեան կարգ անցած մեր բարքերուն մէջ:

Եւ սակայն ինչո՞ւ ժլտտ չըլլալ քիչ մը այս փառաբանութիւններուն մէջ, և ինչո՞ւ համահաւասար յարգանք ու համակրանք արտայայտել անոր՝ որ իր հազարաւոր ոսկիներէն քանի մը ոսկի միայն կը յատկացնէ ողորմութեան և անոր որ իր ունեցածին մեծագոյն մասը սիրայօժար արամադրութեանը տակ կը դնէ Ազգին:

Բուն խնդիրը հոս է ահա, և խոստովանինք որ քիչ մը չափազանց չափ մարդիկ ենք մենք առհասարակ և չափ չենք գիտեր բնաւ ո՛չ փառաբանելու և ո՛չ ալ քամահրելու մէջ: Կշիռը մեզ համար ստեղծուած չէ կարծես և բնաւ կարեւորութիւն չենք տար մեր բոլոր գործերուն մէջ նժար մը դնելու անհրա-

ժեշտութեան, ինչ որ սակայն չտ'տ նկատողութեան առնելիք կէտ մը կը համարեն օտարները թողունք ուրիշ տեղեր, նոյն իսկ մայրաքաղաքիս մէջ:

Եւ արդէն չենք մտածեր որ մեծամեծ փառաբանութիւններ ընելով պըզտիկ բարերարներու, այս վերջինները արդէն լրացուցած կը համարեն իրենց պարտականութիւնները և չեն խորհիր ալ ընաւ կարեւոր բարեգործութիւններու հեղինակ հանդիսանալու: Իրենց փառասիրութիւնը գոհացում գտած կ'ըլլայ կատարելապէս և հարկ չեն տեսներ ալ աւելորդ փառքերու տիրանալու:

Կը տեսնուի ուրեմն թէ շատ անգամ մենք ենք որ պատճառ կ'ըլլանք առողջակի կերպով, նուազեցնելու մեր մէջ քանակը բարեգործութիւններու, ուրոնց շատ պէտք ունին տակաւին մեր եկեղեցական ու կրթական հաստատութիւնները, բարեգործական նպատակներու համար կազմուած պատուաւորները ևն:

Անդրադառնալով Տիկին Քէլէկեանի բարեգործութեան, իր տեսակին մէջ գեղեցիկ է, ըսինք, անոր համար որ, վշտահար կինը ատով իր ողբացեալ ամուսնոյն մահուան անկողինին մէջ բերնով միայն թողած կտակին գործադրիչը կը հանդիսանայ և հաստատ հիմերու վրայ գնելով, կը ներկայացնէ նուիրատուութիւնը Ամեն Ս. Պատրիարք Հօր:

Գերազանցապէս ազնիւ տիկին մը միայն, որպիսի է Տիկին Քէլէկեան, պիտի ուզէր այսպէս յաւերժացնել ամուսնոյ մը յիշատակը, որովհետեւ մեր մէջ ո՛րքան հարուստ որբեւայրիներ կը վրասան, որոնք իրենց ամուսիններուն թողած հարստութեանը վրայ կը նստին և որքան հարուստ տիկիններ կան որոնք աւելի կը նախընտրեն ահողին գումարներ վատնել թղթախաղի, իրենց կիրքերուն գոհացման համար լպիրշ միջոցներու շուայել իրենց դրամները, քան ու է նուիրատուութիւն մը ընել իրենց Ազգին անունով կառուցուած հաստատութիւններու:

Տիկին Քէլէկեան այսպէսով, ո՛րքան որ կը յիշենք, մէկ անգամ և սակայն մե՛ծ բարերար կը հանդիսանայ ու արժանի կը դառնայ ամէնուս հիացման, իրեն անուական ու բարեսիրտ տիկին, որ դիտէ այնքան գեղեցկօրէն յարգել իր կողակցին յիշատակը ու միանգամայն սատարել իր համայնքին:

Իրմէ աւելի փայլուն օրինակ մը չը պիտի կրնայինք ներկայացնել մեր փափկասուն տիկիններուն:

ՎԱՀԱՆ ԹՕՇԻԿԵԱՆ

ՅՈՒՂԱՐԿԱԻՈՐՈՒԹԻՒՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԷՖԷՆՏԻ ՔԷՐԷՍԹԷՃԵԱՆԻ

Երեքշաբթի ժամը 5ին Սկիւտար Ս. Խաչ Եկեղեցոյն մէջ կատարուեցաւ յուղարկութիւնը Յովհաննէս ԷՖ. Քէրէսթէճեանի (դեղագործ), իրեն համակիր խումբ յուղարկաւորներու միջև: Հանդէսին կը նախագահէր Գեր. Տ. Մկրտիչ Եպիսկ. Վեհապետեան, չուրջը ունենալով երկու վարդապետներ, բազմաթիւ քահանաներ և դպիրներ: Խմբագրութիւնս խորապէս կը ցաւակցի Քէրէսթէճեան և Մաղլըմեան ընտանիքներուն այս դառն կորուստին առթիւ:



ՎԻՐԱԲՈՅԺ ՏՕՔԹ. ՃԷՄԻԼ ՓԱՇԱ

ՈՐ ՄԻՆԵՐՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆԻՆ ԲԱՐՁՐԱՅԱԻ

Օսմանեան բժշկական դասուն մէջ փայլուն դիրք մը կը գրաւէ Վսեմ. Տօքթ. Ճէմիլ փաշա : Պատուակալ վիրարոյժն է Համիտիյէ մանկանց Հիւանդանոցին և արտաքին ակտաբանութեան ուսուցիչ կայս. բժշկական վարժարանին : Ճէմիլ փաշա երեքշաբթի օր յաջող գործողութիւն մը կատարեց կայսերազուն իշխան Բարձր. Ահմէտ էֆէնտիի վրայ որ ութը տարիէ ի վեր կը տառապէր աղեթափութենէ :

Վեհ. Սուլթանը խիստ դուռնի մնալով այս յաջող գործողութենէն, բարեհաճեցաւ միւշիբութեան աստիճան շնորհել ն. Վսեմութեան :

ՅԱԾՈՒԿ ԽՕՍՔԵՐ

ՀԱՅԵՒ ՄԸ

Սիրելի Պարոն,

Հիմայ որ ալ ձեր ուսումը աւարտած էք, գիտէք ինչ որ անհրաժեշտ է արդարացնելու համար քաղաքացիական Ձեր իրաւունքները, կը սկսիք գրել Ձեր անունը խոշոր գիրով մը, ածականներու համաձայնութիւնը կարդացիք, Նատիրի մը Ձէնիթ չըլլալը գիտէք, ու մատներնուդ վրան՝ կը սահնցնէք ալճեպրան իր պարունակած բոլոր ֆորմիւլներով, Միքատօն «բոյրի սրուակին» հետ չէք չփոխեր, որ կը խօսիք քաջաբար Կիկերոնէն . . . Տէքաւթի լեզուն, այսպէս նաեւ Սաքսոն ցեղերու, Կոթաց, Եփրայիցւոյ, Ղեւտաց, Գաղտիոյ, ու Սանսքրիտի ու Ճինաց ալֆաբէները գիտէք, որ կը ճանչնաք ֆիզիքն ու չիմին խորապէս, տիեզերագրութիւնը, մեքենագիտութիւնը, բնազանցութիւնը, հոգեխօսութիւնը, դանկաբանութիւնը, մոգութիւն, իմաստակութիւն, մահճաբուսութիւն գիտէք, կը ճանչնաք բոլոր փիլիսոփաները ու կրնաք արտասանել բոլոր բանաստեղծները ազգերուն, բնախօսութիւնը, բուսաբանութիւնը սովորեցած, կենդանաբանութիւնը ոչինչ էր արդէն, գիտէք, օրինակի համար, Հիրիկին ու Բարակի մը աշխարհապատկան դատակարգութիւնը, որուն համար ամէն թերթ կը կարդաք . . . քաղաքականութեան au courant կը հետաքրքրուիք անով, թաղային ու վարժարանական, թեմական ու աշուարձանային անուծելի կնճռոտութիւնները լուծելու անվերջ ջանքեր կը չռայէք, որ վանական չէք միայն, և որ միշտ վանականաց շահատակութիւններով կը պարագիք, օգտակարը կը քարոզէք, լաւագոյնը կը բարբառիք, վսեմը կը ճառէք, բարձրը կը դովէք, որ բարի էք հրեշտակի մը նման, և խնդրական չեն Ձեզի համար Հիրիկին հրպարտութիւնն ու Բարակին սրամտութիւնը, համեստ էք ու բուրումնաւէտուած գեղեցկագիտական ընտիր ճաշակով մը, շատ ալ galant, ըսէք միայն թէ ինչո՞ւ շատ պղտիկ անուշադրութեամբ մը, չա՛տ պղտիկ, . . . տէրը չէք Ձեր գրողանի իմաստուն պարունակութեանց:

Սիրալիք յարգանքներով

Ձերդ

Քուզին Հ. Մ.

ՀԱՅԿ ԿԻՒՏԵՆԵԱՆ

ԵՒ ԻՐ

ՆՈՒԱԳԱՀԱՆԴԵՍԸ

Շօքօլան ձեռքէն խլուած տղու մը պէս լալկան օգուլ մը, դուրս կը նետուիմ հասնելու համար ցերեկոյթին Հայ երիտասարդ արուեստագէտին որ հրաւիրած էր զիս:

Բըթի-Շանի բեմին համար կարծես բազմա՛մէ որ կը ժպտի միշտ, քանի որ մեծ տաղանդներ արուեստագէտներ հոն կուգան կը թաւին, Սառա, Բօքլէն, Մուռէ-Սուլլի, և ուրիշներ:

Կիւտէնեանը լսած էիք De bouche en bouche, բայց իր ջուլթակը անո՛ւշ . . . :

Կիրակի ժամը երկուքն էր երբ à pas lent, et pour son talent կուղղուիմ թաղապետական պարտէզին մօտիկէն, երբ բեմին կռնակի դրան վրայ կը տեսնեմ զինքը, սեւ մաքուր en habit, առօրսիք բէլքոյինը ուսերուն, սիկառը բերնին: Մինչ նոյն պահուն մօտէս անցնող երկու հայ երիտասարդներ զիրար հերկով կը մրմնջեն.

— Նա՛, նա՛ Կիւտէնեանը, ճամբեանին մէջը պատկերը դրեր էին նէ . . . :

Des Ignorants !!

Ու տակաւ կառքերը կը հասնին, ինչպէս մօտակայ տեղերէ եկող ընտանիքները հետիոտն ու բոլորը տաք վերաբերումով մը ներս կը խուժեն, ուշացած ըլլալու տատամսոտ քայլերով և ահա բառքեռը, ինչպէս նաեւ օթեակները կը զարդարուին կանացի թուալէթներով:

Կիւտէնեանի տաղանդին վրայ խօսելէ առաջ թող ներուի ինձ քիչ մը դիտողութիւն ընել մեր հայ-լայճին կէս-խանդին, քանի որ ինքը, այսինքն Բերայի բարձր այդ դասակարգը՝ չէր ուզած մասնակցիլ ու քաջալերել երիտասարդ ու խոստմնալից տղեկը:

Մեր մէջ օտարամոլութիւնը այնքան արմատացած է որ, ոչ մէկ տաղանդ կրնայ զայն խախտել: Մեր աչքը դուրսն է, ու լրագրութեան՝ ինչպէս նաեւ պատերու ափիշներու մէջ, օտար տաղանդներ կը փնտռենք և կը փութանք ծափահարել M. Xերը... Ո՛վ գիտէ,

բայց կարծեմ կըլլեցնել կուզենք թէ՛ մենք ճաշակ (°) ունինք . . . :

Ինչ և է *revenons à nos moutons* :

Պէտք է ճշմարտապէս խոստովանիլ թէ՛ Հայկ Կիւտէնեան մէկն է այն ընդունակ արուեստագէտներէն որոնց՝ բաղդը կանուխ չատ կանուխ ժպտած և օտտած է լաւագոյնով, անմրցելիով :

Վարագոյրի բացումին կսկսի Համիտիէ քայլերգը, որուն՝ ժողովուրդը կունենդէ յոտնկայս և որոտնդոտ ծափերով կողջունուի : Եւ ահա գուրիսներու մէկ քովընտի դռնակէն դուրս կը պոռթկայ, ժիր, զուարթադէմ ու իր արուեստին կատարեալ գիտակցութիւնը ունեցողի մը հաստատ քայլերով :

Ժողովուրդը կը ծափահարէ, մինչ ինք չնորհակալութեան ճօճումներու մէջ իր ջուրթակը կը լարէ դաշնակին հետ, որուն առջև նստած է Պոլսոյ առաջնակարգ դաշնակահար Պր. Սէլվէլի :

Հոս բոսկուամին մի առ մի կտորները յիշելով կամ թուելով, գործէ հասկցողի և կամ *remplissage*ի պէս չեմ ուզեր ձանձրացնել ընթերցողներս, այլ սաչափ միայն պէտք է ըսեմ որ, Հայկ Կիւտէնեան սովորաբար հոս հոն լսուած ջութակահարներէն չէ և ոչ ալ կարգ մը անուն հանած Ֆիւքսիներէն, այլ տէրն է իր ճպտոյն որ կը դողայ իր ձեռքին տակ :

Մատներու *agilité*ն և զարնուածքի մեղմանուլ յատկութիւնը եկած միացած բնականութեան հետ, այնպէս կը ցուցնէին թէ այսօրուան Կիւտէնեանը, վաղը հրաշակերտ մը պիտի ըլլար :

Երաժշտական գործիքներուն էն դժուարինը և էն անուշը՝ ջութակը ըլլալը ընդունուած է այսօր բովանդակ երաժշտական աշխարհէն :

À propos :

Օր մը Սառազաթի բարեկամներէն մին երբ մեծանուն ջութակահարին հետ պտոյտ մը կընէր պարտէզի մը մէջ, հարցուցեր է մեծ վարպետին թէ՛ արդեօք ջութակի վրայ իրեն անծանօթ գաղտնիքներ մը կան, և կամ որչափ բան գիտէ այդ մասին . . . :

Հոչակաւոր ջութակահարը գետին ծռելով պզտիկ քար մը կառնէ ու վեր նետելով կըսէ իր ընկերոջ .

— Որչափ տեղ գնաց նետած քարս . . . : Անկէ վեր . . . անսահման երկինքը կայ, այնպէս չէ . . . :

Արդ մեր համակրելի արուեստագէտին համար նոյնը կրնանք ըսել : Այսօրուան իր գիտցածը արդէն սքանչելի, սակայն մէկ քանի տարիէն կրնանք ըսել թէ Կիւտէնեան անշուգական պիտի ըլլայ և պիտի անմահացնէ իր վարպետին իծմանի անունը :

Ջուարթ դիտողութիւններ :

Կիրակի օրուան ցերեկոյթին ներկայ գտնուողները կրնանք երեք դասակարգի բաժնել :

1. Միւզիքէ հասկցող և արուեստագէտ մը լսելու փափաքողները :

2. Կիրակի տաղտուկը անցընելու համար դիմող և բեմէն աւելի օթեակներու մէջլիններովը հետաքրքրուողները :

3. *Homme de bois*ները :

Առաջիններուն մէջ պէտք է յիշել M. Huartէն որ անձամբ չնորհաւորեց Հայկ էֆֆին, ըսելով թէ ինք նոյն իսկ Սառազաթէն լսած է այդ իր կտորը և Կիւտէնեան յաջողած է յիշեցնել իր մտքին մէջ իր հայրենակիցին ներկայութիւնը :

Երկրորդներուն մէջ նոյնպէս տեսողութենէս չը վրիպեցաւ անանկներ, որոնց գըդակը վար կիյնար ամէն անգամ որ գլուխին դէպ ի վեր, դէպի օթեակները կը բարձրացնէին :

Եւ երրորդ դասակարգին մէջ գտնուեցան անանկներ, որոնք զարնուած կտորը չաւարտած ծափահարեցին և . . . ինչ որ էն աչքառու սխալն էր, մի և նոյն ժամանակ հաստատող իրենց *bouhomie*ն, ցիկանեովայգընի պէս գեղահրաշ կտորի մը վերջին խաղերուն ոտքի ելլալով մեկնեցան :

Հապա մրափողները . . . բարձրաձայն խօսողները, հազալողները, գրպաններու քառնէ հանելով մէջը նպարավանառին հաշուեկշիւը ընողները . . . :

Վերջապէս ասոնք բոլորը կուգան հաստատել թէ՛ մենք ճաշակ չունինք ոչ ալ դադափար նուագին, և նուագածութեան նուրբ արուեստին վրայօք : Մեր այրերը, ժամանցը թղթախաղին և կանայք բանքասանքին մէջ կը գտնեն :

Ստոյգ աղբիւրէ կիմանանք թէ՛ մասնաւոր հրաւերի մը վրայ, յառաջիկայ Միջինքին ի նպաստ Ս. Փրկչի Հիւանդանոցին տրուելիք ցերեկոյթին պիտի մասնակցի համակրելի ջութակահարը : Ահա առիթ մը ամէն անոնց որոնք չի կրցան վայելել ու լսել զինք իր մասնաւոր օրերուն :

ՄԱՐԿՈՒԹ

Նամակը հասած էր արդէն, երբ Մարկոսի իր անակնկալ *entrée*-ն ըրաւ խմբագրատունս, և իրեն ընծայուած այս սիւրբօրէն ներշնչուած հետեւեալին հրատարակութիւնը խնդրեց խմբագրութենէս:

Ազնիւ ընթերցողհիւ,

Ձեր գթառատ ողորմութիւնն հասաւ ինձ, Հոգ չէ թէ է՛ր ոսկիի տեղ... սոսկ պղինձ, Ողորմութիւնն սակարկութիւն չգիտեր... Բաւ է, ղրկողն ըլլայ առողջ կամքի տէր:

Երկու հարիւր ոսկիներս ըսչխելով, երբ տեսաք թէ ինձ կը մնար կըլլել... հով, Համեստաբար խնդրած տասնոցս էք ղրկել, Ձկնորսի պէս զայն ընելով կարթի... կեր:

Ազնիւ Օրիորդ Ձեր սրտաբուղիս նուէրին, փոխան հայցեմ մեծ գթութիւնը լերին, Որպէս զի դուք, և ալ շիկներ Ձեզ նման, Տանը քեզեմ տասնոցով մը չի մնան:

Միշտ տասնոցին ակնկալու

Մարկոսիք

ԶՈՒԱՐԹ ԺԱՄԵՐ

Երբ գիտունի մը կը հարցուի թէ ի՞նչ է աշխարհի վրայ այն բանը որ ամէն մարդ, հարուստ թէ աղքատ, անխտիր կրնայ ունենալ, կը պատասխանէ.

— Երա՛զը:

Եւայի թռնուհիներէն գեղանի կին մը օր մը գիտուններու ժողովի մը մէջ սա հարցումը կ'ընէ.

— Ո՞վ է է՛ն խելացի մարդը ու ամենէն մեծ փրկութիւն:

Ներկաներէն մին.

— Է՛ն խելացի մարդը Տիկի՛ն, կիներէն չի խաբուողը, ու ամենէն մեծ փրկութիւն անոնց ամէն ըսածին կարեւորութիւն չի տուողն է, կ'ըսէ:

Յայտնի է որ սգէտներն ու անճարակները չափազանց ալ յաւակնոտ կ'ըլլան:

Երբ առ կարգի մտրդոց ու է մէկ թեւրութիւնը մէջտեղ դնես, ինքզինքնին արդարացնելու համար անանկ միջոցներու կը դիմեն, անանկ փաստեր կը բերեն որ չես կրնար խնդուքդ զսպել:

Աս դասակարգէն անճարակ ածիլող մը ամէն անգամ որ ածելին ձեռք առնէր անպատճառ կարիւնէր ենթակային երեսին մէկ կողմը: Օր մը խանութը գտնուող պատահական յաճախորդ մը երբ յաջորդաբար ածիլուողներու դէմքերու սկզբութիւնները տեսնելով զգուշութեան հրաւէր կը կարդայ, անճարակ ու պատրաստաբան ածիլողը առանց մազի չափի զգածուելու, սա պատասխանը կուտայ.

— Պարո՛ն, ասոնք գործաւոր մարդիկ են, ես, միշտ ապառիկ կ'ածիլուին և որովհետեւ գրեւ կարգաւ ալ չեն գիտեր որ տեսրակ բռնեմ, ստիպուած չեթելի կը քաշեմ:

* *

Կեանքը ապահովագրութեան դրած մէկու մը բնակարանին վարի յարկէն հրդեհ կը ծագի. դրացիներ տեսնելով որ այդ մարդը վերի յարկը անտարբեր մը նստեր է.

— Բարեկա՛մ, կը պոռան, չի փախլիս, հիմակ էրիս պիտի:

Այդ մարդը սակայն, առանց նոյն իսկ տեղէն շարժելու.

— Ինչո՛ւս պէտք կ'ըսէ, ատիկա ընկերութիւնը թող խորհի:

* *

Գիշեր ատեն երկու դրացիներու մէջ սա աղմուկը կը փրթի.

— Բարեկա՛մ, բարեկա՛մ.

— Ի՞նչ կայ, ի՞նչ է ան... .

— Հրդեհ կայ, հրդեհ, ելի՛ր... .

— Ո՞ւր տեղ.

— Մեր փողոցը, սա քովի կաթնաւաճառին խանութը.


— Ձարմանալի մարդ. ես ալ կարծեցի որ ուրիշ տեղ մըն է, այդչափ իրար անցնելու ի՞նչ կայ, հիմայ ուր է ուր չէ կը մարի:

— Ինչպէ՛ս.

— Հոն ջուրը չատ առատ է:

ՄԵՌԵԼԸ ԶԻ ՊԱՂԱԾ

(ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ՆՕՔԵՐ)



Գիտութիւնը մեզ կ'ուսուցանէ թէ, մեռեալ դիակի մը փտտումը յառաջ կուգայ որդերու ճճիններու միջոցներու կրծելէն, այսինքն, մարմնոյն ճարպային մասը զոց դագաղին մէջ մնալով տեղի կուտայ կը փտտի և այդ փտտումը կարթնցընէ որդերը, որոնք մէկ քանի շաբաթուան մէջ չոր կը մախք կը դարձնեն զայն:

Որդերու այս անողոք կրծումը ըսինք թէ յետ թաղման կը կատարուի, այսինքն հողը վերմակ ըլլալէն նոյն իսկ շաբաթ մը վերջ, բայց ինչ ըսենք կարգ մը երկտանի անաճ որդերուն, որոնք մեռելը աչքը դոցելէն անմիջապէս վերջը կսկսին կրծել, ուսել ու լուծել հանգուցելոյն ոչ թէ ֆիզիքականը՝ այլ նիւթականը, ի խնդիր դըրամին, ժառանգին:

Դրամը այն բանասէն է, որ սրտակեղեք արցունքներն անգամ կրնայ ցամքեցնել ու զսպել, թոյլ չի տալով որ անոնք պոռթկան սիրելոյ մը մահուան անկողնոյն մօտ... եթէ երբեք ննջեցեալը կուտ բռնող դասակարգէն է: Հանդիպած ու տեսած եւ անանկներ, որոնք դուրսը սալօնը թուղթ գրիչ ի ձեռին եղածը չեղածը արձանագրելու զբաղած են, մինչ մամկոյ աղբարը Եւթի ջուրով մեռելը կը լուար ներսը, և որ մարմինը դեռ լաւ մը պողած չէր:

Չէք հաւատար, կամ հաւատալի չի թուիր ձեզի այս իրականութիւնը, սակայն ճշմարտութիւն է զոր մէջ բերի հոս և ոչ թէ ուշադրամասիօն:

Դպրոցներու մէջ օրինակներով դասախօսութիւնը ընդունուած ըլլալով, քիչ մը վարը մեր նկարագրականը կենդանի և բացայայտ օրինակը պիտի տայ մեր ըսածին, ու պիտի պարզէ այն չափ քիչ բացառութեամբ ընդունուած ճշմարտութիւնը թէ՛ կորկոտաւոր մեռելի մը ժառանգական վիճաքանութիւններն ու կռիւները, ննջեցելոյն մարմինը չի պաղած կսկսին:

* *

Բժիշկը վերջապէս յոյսը կտրած, երբ դուրս կելլար սենեկէն, մահճակալին մէջ Միրիճան աղա խուկալու սկսած էր արգէն:

Հիւանդապահները քչոցով մը ճանձերը կը վանէին դէմքին վրայէն խեղճ հոգեւորքին, որուն վրայ ծածկուած վերմակը ալ չէր շարժեր շնչառութեան ելեւեջներէն:

Միրիճան աղաին բանը բռնած էր ալ:

— Ոտքդ պագնեմ Տօքթօռ, ինտո՞ր գտար, կը հարցնէր կինը: Թաց խխում թաշկինակը աչքերուն տանելով, արցունքէն թէ նէվազիլի ճոխկէն չեմ գիտեր...:

— Անյոյս տիկին... հակառակ այնչափ խնամքներուն դեղերուն, հիւանդնիւս ծանր է...:

— Վույ վախճամ...:

— Հիմա հոս ջուր մը գրած եմ, երբ արթննայ նէ ապուրի դգալով մը կուտաք, բայց դեղը տալու համար մ'արթնցնէք (իր յաւիտենական քունէն):

— Աման տօքթօռ... Նուրիցայ... հայրդ... նոյն ինչ կըսէ կոր տօքթօռ:

— Այս տօքթօռ... աճապա պիտի մեռնի... (կսկսի... լալ):

— Ձեմ կրնար որոշ բան մը ըսել տիկին... բայց...:

Նոյն ատեն Նուրիցային առաջինը Բարթամ աղա վրայ գալով:

— Նուրիկ ինչ խապար, ինչ կըսէ կոր տօքթօռ...:

— Երեւցածը ումէտը կտրեր է... վախճամ բան մը ըլլայ հարը...:

— Էյ չըսե՛ս ինծի ո՛ր սահաթէ...:

— Ինչ կայ քի ինչ պիտի ընես, պաշխա տօքթօռ պիտի կանչես...:

— Ճանրմ ինչո՞ւս պէտք, ես գործս նա՛մ, մէյ մը երթամ վերի քացան մէ՛օնուրէմիչ ընեմ...:

— Քա ճանրմ տա՛նա պէլքի կըւընթնա՞յ...

— Հիմա ուրէնէ տղաքը կը համին... ան ճանաւարներուն հետը ո՞վ պիտի օղւաշ-

միշ ըլլայ . . . հաքը սիւքիւրկէ մը պիլէ
հիւսէյիդ չիյնար . . .

— Բա ետլրում ինչ կըսէ կոր Բար-
թամ աղան . . . անաս պաշխա աօքթօն մը
պերինք . . . կըսէ կէս մեռելին կինը .
Ո՛ւր է Բարթամ աղան, ո՛ւր գնաց . . .

— Վեր ելաւ, աղապային քովն է տու-
տու, դուն հառտալը շինէ տէ ճիւղերուն
դնենք . . .

Նոյն ատեն Բարթամ աղա Միրիճան ա-
ղայի սենեակը մտնելով՝ առանց մարդուն
երեսը նայելու, մոմ մը կը վառէ ու ձեռքի
լեօքը բռնկողունելով գործի կսկսի, մինչ հո-
գեւարքը սանկ կէս մը աչքերը բանալով .

— Բար . . . թամ . . . օլլում . . .
տահա . . . չի . . . (էօհէ) մե . . . ո . . .
ա՛ . . . մօ . . . մը . . . (էօհէ) ինչո՛ւ . . .
(ա՛յ) վառեցիք . . . (էօհէ) . . .

Բարթամ աղա առանց պատասխանելու
կը զմուտէ դրամարկզը .

— Ծօ՛ . . . պո՛ւտ . . . մը ճու . . .
(էօհէ) . . . պո՛ւտ . . . մը . . . ճու . . .

Մինչ իշկիւղար փեռան իր էական գոր-
ծովը կզբաղէր, մայր և աղջիկ ներս կը
մտնեն .

— Աս ի՞նչ է Բարթամ աղա, ինչո՛ւ
մէօհլը զարկիր, վայ մեղքիս, կլխաւորիս
չունչը վրան է, էյ կա՛յ եա՛ . . . արթըխ . . .

— Ի՞նչ գիտցար, ձգեմ քի տղաքդ կան
տէ քուերերին մահրո՛ւմ ընեն . . . եազմա
եօգ . . . էրիկն եմ գտնուեր նէ աչքս չորս
պիտի բանամ . . .

— Աղէկ ամա ետլրո՛ւն, հէրիֆը, տա-
հա կերերտկայ կոր, զօրքին մեռնիմ պէլքի
կը տիրինայ . . .

— Ես հիմա կոցեմ տէ, տիրինայ նէ կը
պանամ . . .

— Ու . . . ս . . . տի՛կ . . . տա՛ մա-
մը . . . (էօհէ) մարէ . . . տահա՛ . . . (էօհէ)
ողջ . . . հո՛ . . . ու աչքերը կը բացուին
խեղճ ճամբորդին . . .

— Բա նա իշտէ կը խորաթէ կոր մար-
դը . . . կիւնա՛ն է Բարթամ աղա . . .

— Ինձի նայէ, սա քիւլերին բալլիքները
տուր քի, արծաթ անուշի ուլէնները իւլն
լապիւնները ետմախ ընեմ տէ մէօհլէմ պի-
տի . . .

— Բա՛ ճանըմ . . .

— Աս ի՞նչ է, իւտճին չիւլին քովն ալ
մէկ հատ մը կայ եղեր, ըսելով ան ալ
կառնէ .

— Էյ հիմա իւտճը տամ նէ, տվուճո՛վ
պիտի տա՛մ, քա ետլրում ի՞նչ թէլաչ է ա-
սիկայ . . . խելքիս կուգայ . . .

— Շիչէն պէրանը տուէք երթայ, ևս
սախաթ գործ չեմ կրնար տեսնար, անէ քի
հոս եմ գտնուեր նէ, Նուրիկին հախը հախ
ըլլալու է . . .

— Աստուծոյ կրակին կաս հէմէն, եու-
մուռճախին օճախը երթաս . . .

— Ուա . . . տի՛կ . . . պօզա . . . զըս
(էօհէ) պուտ մը ճո՛ւր . . . (էօհէ) .

— Բա դգալը Բարթամ աղա, ճուր կու-
զէ կոր հէրիֆը, քա աս ի՞նչ ճանալար է
եղեր մէյէր . . . տեղին ցուցուր ինքզինքդ
. . . քա դգալը . . .

— Պէ ճանըմ, ևս գործս մի նայիմ ձե-
զի մերա՛մ մի հասկցունեմ . . . սա ո՛ւր է
էօպիւշիւմ խալիններ կար նէ վարի օտան,
անոնք ալ տէնկ ընենք տէ հազրը ըլլայ . . .

— Վճուտդ վերնայ հէմէն թահիճ հէրիֆ
քի առանկ քէթիէյի ըռէնկդ փոխեցիր . . .
խլխլիս հէմէն տէ շան սատակ ելլաւ . . .

— Բա ճանըմ տուտուտ, հէրիք պէթ
տուլա կարդաս վրան, իրաւցունէ ետպան
ճի չէ՞ եա՛, չօգ չէյ . . .

— Աշկ օլսուն զաւակ, քա հարդը հողի
չէ տուեր, տունին մէջը կէօչի է ելիրտէ
հազ կըննիս կոր, հա՛ . . . դգալը վերցուց
հիսապի ելաւ, հէրիֆին ճուր պիտի տամ
դգալ չիկայ . . .

— Հախ ունի՞ եա մարդը, հիմա Բառ-
նաքասը իւլն լիւռնը գաննէ, տունը կրակի
վէրանէ կը դարձնեն, ան վախիթը սաճ
մանղալ մը պիլէ չես ունենար քի ծառուը-
ներդ տաքցւնես տէյի . . . սա չէ՞ ըլլալի-
քը . . .

Մինչ տանը մէջ, ժառանգական այս ան-
տեղի ըսիւրասուր կը շարունակուէր, անդին
խեղճ Միրիճան աղան, մոռթոն կը քաչէ,
ու բոլոր հոն գտնուողներէն ոչ մէկը կը նըշ-
մարէ այս տխուր պարագան .

— Աղապային ծոցի սահա՛թը ուր է . . .
օռթան հոնկեցէք նայիմ . . .

— Բարձին տակը ըլլալու է . . . կըսէ
Նուրիյա, հօրը անկողնոյն մօտենալով, քա՛

... հայրիկը... հայրիկս մեռել է...
հայրիկ... :

— Էհ... Թէլաշնիդ ձեզի մնաց, կըսէ
Բարթամ աղա, մինչ խեղճ կինը Ուստիկ
մեռելին վրայ խնայով կսկսի մազերը փետ-
տել :

— Աղբարներուս խապար մը զրկէինք
Բարթամ աղա... հայրիկս... անի հայ-
րիկ... հայրիկ... :

— Մէկ հատ մը Թէփէյիդ իշնամ նէ կը
հասկընաս խապարը ուրիշ գալը... մախ-
սունս կընես կոր... :

— Հապա չիմանան պիտի... չօգ չէ՛յ...

— Տահա մութվախին Թէնճիրէները բու-
սուլա չեմ չինք, մէկ հոգի մը ո՞ր մէկին
հասնիմ... :

— Ձը հասնիս իշալլահ եռմուռնախ հէ-
րիֆ... քա տահա տաք է կլխաւորը...
տահա չէ պաղեր... :

— Հօ՛ւրէ քի տաքնայ, ցնթած կնիկ,
աստին եկուր տէ հիսապ տեսնանք, ներսի
օտան քանի մնտուկ կայ... :

— Աստուծոյ գտնաս հէմէն... :

— Նուրիկ, դուն դնայ տէ քանաբէնե-
րուն վրայի խալիլի կտորները համրէ, ես
ալ հորին չուզանք աւելնլաւիլ ընեմ... :

— Քա խելքիդ եկաւ, հորին չուզանք
ինչ պիտի ընես... հայրիկը... անի
հայրիկս... աշիդ բաց... անուշիկ ա-
ղապաս... :

— Քա սուս եղէք քի ըրածս թողածս
հասկնամ... սա հիսապնիս տեսնանք տէ,
ետքէն մէկ երկու չաքաթ նստեցէք լացէք...
հիմա տղաքը կուգան... :

Ու հաղիւ կէս ժամ անցած էր, երկու
եղբայրները հեւ ի հեւ կը հասնին ու քըր-
տինքնին սրբելով :

— Աֆէրիմ մայրիկ, խապար մը չի՞ն
խրկեր... երբ մեռաւ... :

— Ժամկոցին մարդ զրկեցի՞ք... աս
քացան ո՞վ զմեռ է, կըսէ միւս եղբայրը :

— Քա ետվրում, մէյ մը հօրերնուտ
ծառքը սօն տէֆա օլտուն պաղէք տէ անկէ
ետքը թեւաւորուեցէք... :

— Աման դուն ալ մարիկ, մեռելը հիմա-
ճուկ գուրս չեն հաներ կո՞ր ես, չօք չէյ,
սա հասկնանք քի ինչ Թէրթիպ պիտի պըռ-
նենք, քուրս մէկ կուտէ, մենք երկուք... :

— Չոռըս ուտէք հէմէն չան զաւկներ...
ծօ՛, հարերնիդ տահա տաք է... :

— Ան հիմաճուկ կը պաղի, մենք գոր-
ծերնիս նայինք ըսելով, կսկսին խենդ հա-
ւերու պէս հոս հոն պրպտել :

— Ինծի նայէ Նուրիկ, դուն գնայ ներ-
սի խալիներուն վրայ նստէ, ես ալ ստակ-
ներուն կլոխը ասնիմ, զէրէ ասունք բէք
թեւաւորուեցան :

— Գուզում Բարթամ աղաս, հարս մէյ-
մը դուրս հանէն տէ անկէ ետքը, հիմա ե-
կող կացող կըլլայ... :

— Եկողին ալ խերը անիծեմ կացողին
ալ, միտրի վրայ պիտի նստեցունես ինծի
հօ՛, աղբարներո՞ւդ թաւաֆ կ'ելլաս կոր... :

— Քա մասո՞ր չէ, ամա հայրիկս...
զաւլալը հայրիկս... (կսկսի լալ) :

— Նուրիցա հո՛ս եկուր, ժամկոցը ե-
կաւ առ տէ վեր բեր, եանի խենթենալս
հիշ բան մը ըսել չէ... :

— Խալիներուն վրան եմ տուտու չեմ
կրնար ձգեր... :

— Աստուծու կրակին կաք հեմէն վո՛ւյ...
վո՛ւյ... վո՛ւյ... քա մարիկ աս ինչ
պատուհաս զաւկներ էք եղէր... կըսէ ու
ինք կերթայ ժամկոցը կանչելու :

Ու հաղիւ ժամկոց աղբարը չալվարը տա-
տանելով սանդուխներէն վեր կելլար, Բար-
թամ աղա թեւէն քաշելով :

— Ժամկոց աղբար հաստը չուզան ու-
նիս... :

— Ձիէ՛... աղաս, ես մեռել սի լուա-
նամ... :

— Ճանըմ հիմա դուն ինծի եկո՞ւր...
մեռելը տեղէն չի փախչիր կո՞ր ես... չօք
չէյ... :

— Զիրը սի պաղէ, աղաս, կեցիք,
ննջեցեալը հեղ մը լուանամ... սըզրա
կիւքեամ կը տանէմ... :

— Ետքը կաս նէ քեզի սըշա չի մնար
ղաթը, կրողը կը կրէ, հիմա եկուր... :

— Քա ճանըմ ջուրը ըլընցաւ, թող
տուէք քի մարդը գործը տեսնայ... :

— Տուտուս հարըս գիտես, վախդին
կընէր քի, վարի մաղաղան պղտիկ խալա-
նող մը կայ տէյի... առջիս ինկիր տէ օռ-
թան հանէ նայիմ... կըսէ Լիւսն, երկու
թեւերը մէջքին դրած... :

— Պէ եսվրուս, հարերնիդ տահա չի լուացուեցաւ պիլէ, քա ինչ ճանաւար էք եղեր դուք . . . :

— Ինծի ըսելուդ, աղջկանդ իլէն փեսիդ ըսէ քի տալեանձիի պէս մալերուն թէփէն ելէր անկուեր են . . . :

— Աստուծոյ կտնաք, ամէնքդ ալ տեղերնիդ կեցէք ա՛խ . . . աչքը թող պանայ տէ տեսնայ քի իրեն մալը մէլալը ինտոր բայ կընեն կոր զաւկները տէյի . . . :

— Շատ լախըւտը չուզէր, ըսէ տէ զընիմ, քանի՞ եռուղան ունինք . . . :

— Պէ եսվրո՛ւմ . . . :

— Շիլթէնիւր՝ . . . :

Նոյն ատեն ժամկոչը թեւերը սօթթած դուրս կուգայ .

— Պատանքին պէզը վիւր է տուտու, տուէք ուր պատանքիմ . . . :

— Կեցիր ժամկոչ աղբար, հիմա գործ ունինք . . . նստէ սիկաւա մը խմէ տէ հիմա կուգայ . . . :

— Քա ճանրմ, ըլլալո՞ւ պանէ, մեռելը չըպ չըպըլտախ դրած է ներսը . . . :

— Թէնծիրէները ո՛ւր են, քանի՞ հատ են ան ըսէ տէ գրեմ . . . վախիթ չիդայ զաթը, գործ ունիմ . . . :

— Ինծի նայէ միւսիւ Լեռն, կըսէ Բարթամ աղա ներս մանկելով սենեակէն, ան վարը թուռչի քիւր մը կա՛յ եա, ես պիտի առնեմ զիտցած ըլլաք, ետքէն լախըւտը չըլլայ . . . :

— Դուն սա քացան պաց նայինք մէյմը, ինքիր կլխեղ կոցեր ես . . . :

— Կը պահամ պմա խըւչալմիչ չպիտի ըլլաք, նայէ ըսեմ, քորերնուդ հաթը, հախ պիտի ընէք, չէնէ իմ թառաֆէս ետպանծի կը խոթիմ գործին մէջը . . . զաթը ողորմած հոգին, ինծի գրախօման քիչտուալ քի ետքէն մէրասը հաւասար ուտեմ տէյի . . . :

— Զիֆթին քէօքը կեր, եռմուռճախ սուռաթը, ժամկոչը պատանքի լաթ կուզէ կոր, դուք աս տեղը մէրաս բայ ըրէք . . . վո՛ւյ . . . անկէ առաջ ես մեռնէյի տէ աս սահաթը չի տեսնայի . . . :

— Տուտու վարը տաներէցը եկեր քեզ կուզէ կոր . . . :

— Քա աղջիկ, թաքիքէ մը կընա՞մ կոր ձգէր աս տեղը . . . քիթին խախուէ մը

տուր ես ալ կուգամ կոր, . . . սա ժամկոցին լաթը տամ քի պատանքէ :

— Քա գուզո՛ւմ մայրիկ, Լեռնին ըսէ քի վերի օտային կետնի մուշամպան ինծի ձգեն, վաղը լոհուսաութանս պիր տիւզ կը սրբեն թէմիզ թէմիզ կը ծփայ . . . չի մոռնա՞ս . . . :

— Քար ձգնես հէմէն ըռէզիլ բօսթալ, քա հորդ պատանգը կը դնեն կոր դուն կայնէր կետնի մուշամպան կը մոմտաս կոր :

Ու մինչ ժամկոչը ներսի սենեակը փակուած մեռելին հետ կը տապալակէր, վերը երկու եղբայր իրար կը կզէին, ու Բարթամ աղա առիթէն օգտուելով կծիկ կծիկ կընէր ձեռքը անցած բոլոր portatif կարասները :

Երբ Տիկին Ուստիկ գործը լմնաց ու վար, քահանային մօտը դնաց :

— Ախ տէր պապա . . . աս ինչ ծունեկաւ կլոխս . . . մեռելը մի նայիմ, զաւկընեւրուս խըւչը՛նը մի խումանտա ընեմ, փեսիս երկան թաթիկութի՛նը մը տիխաթ ընեմ, հարսիս ճըլըլաւը մի . . . ո՛րը, ախ . . . ո՛րը . . . :

— Աստուած ողորմած է մայրիկ . . . դուն համբերող եղիր . . . անոնք երիտասարդ են ու մահուան կսկիծը չեն զգար . . . հրամանքդ տարեց, խեղացի մայր մընես . . .

Ու հազիւ Տէր պապան իր մխիթարակտն խօսքը պիտի շարունակէր, յանկարծ մեծ ազմուկով մը երկու եղբայր ու Բարթամ աղան ներս կը վազեն, մինչ տէրա՛նքը վախէն սէտիրին վրայ կը ցատկէ :

— Գուզում տէր պապա, աս հէթիֆը կարգեցիր նէ, պապա ի՞նչ ողջութանը ունեցածը, անոնց չի տուա՞ւ մի . . . :

— Տղաս, կեցէք որ մխիթարական երկու խօսք ընեմ . . . Աստուած ձեզ պահէ հալրում . . . կայնէ նայինք . . . :

— Ծանրմ ատոնք ետքէն կը զրուցես, հիմա իմ ըսածիս ճուղապ տուր, ասոնք ելերեն քի նախըթէն պաս պարապար պիտի ուտենք տէյի . . . :

— Եսվրում ես ժառանգական խնդիրներուն մէջ այնքան յաջողակ չեմ . . . սըտեղէն քիչ մը խռնկ առնել տուէք տէ, երթամ հօրերնուդ վրայ Աւետարան մը կարդամ :

— Մինչե քի աս հիտապը չի չտուի նէ,

հորըս սնտուկը ժամ չեմ դրկեր գիտցած ըլ-
լաք . . . ես իլլէ աս օրին կը պէքէյէմ կոր
քի պօչս շտկեմ տէյի , պարտքը տիպէս կը
վազէ կոր . . . :

— Սուս եավրում ամօթ է քա՛ . . . կը
պոռայ Ուստիկ , քսան փարայ տուր տէ
խուկ անենք . . . :

— Բաւնաբար թո՛ղ տայ . . . :

— Լեւոնը ինչո՛ւ չի տար կոր . . . ան
թող տայ . . . :

— Բարթամ աղային քէսէն մուկը չէ՞
կէրեր եա՛ . . . :

— Նուրիցան ալ մէրասխոռ է , թող եր-
կու տանոց հանէ տայ . . . :

— Տուտու դուն տուր . . . :

Վերջապէս Տէր պապան տեսնելով որ այս
անճանաչ մարդոց հետ խօսքը պիտի երկա-
րի , դրպմէն քսան փարայ կուտայ ժամ-
կոչին որ երթայ խուկ անէ :

— Ինծի նայէ սուտու , ես անանկ տիւ-
պառայի չեմ իզար , ես իմ հախս օռթան
կը դնէք , հախովըս բայ կընէք , ես չէնէ
կնիկ ֆիլան աչքիս չերեւար , ալօքաթ պի-
տի դնեմ , հէմ ալ աս դուռնէն դուրս չայը
սիւքիւրկէսի մը չեմ ձգեր քի հանէք . . . :

— Հանդարտէ աղաս , կըսէ քահանան ,
նախ ննջեցեալը տանինք իր տեղը յանձնենք ,
անկէ վերջը ըլլալիք բաներ են ասոնք . . . :

— Դուն չիյտես Տէր պապաս , աս հէ-
րիֆներուն թապիյէթը . . . աղպան զաթը
ինծի խօսք տուած էր աս տունին երկու
տիրէկը , ամա ինչ ֆայտա , սունջը դուրս
տուած վախթը քովը չի գտնուեցայ . . . :

— Եաղմա կար քի երկու տիրէկը քե-
զի պիտի տար , մենք հոս նէճիէինք . . . :

— Քա սուս եավրում , կլոխդ ողջ կե-
նայի կուգան կոր , ծաներնիդ կըյրեցէք . . . :

— Տա սօխախին դուռը կոցեցէք , եկո-
ղին ալ ըսէք քի դործ ունինք հիմա տէյի ,
աչքիս պան մը չերեւար կոր . . . :

Ու մինչ քահանան վերը իր աղօթքովը
կզբաղէր , վարը ձայները կը բարձրանային
մէկ մէկ օթթալ աւելի բարձրէն :

— Մեղա՛յ Աստուծո՛յ . . . :

— Անուշին թախըմը ես պիտի ուտեմ ,
ինծի կիյնա՛յ . . . :

Քահանան . — Մեղա՛յ Տէր . . . :

— Սըւը քիւրը ինծի կիյնա՛յ . . . :

Քահանան . — Մեղա՛յ Աստուծո՛յ . . . :

— Պապայիս տակի չիլթէն . . . :

Քահանան . — Մեղա՛յ . . . բանիւ գոր-
ծո՛վ . . . մեղա՛յ . . . :

— Էյ ծօ՛ ինծի՛ . . . մարերնիդ մու-
ցա՛ք . . . :

— Ժամկոցին ըսէ քի պապայիս պերնի
վերլի վարը աղպային թախըմը հանէ տէ
տուտուիս տայ . . . ինչո՛ւս պէտք , աստար
տարուան կնիկն է . . . :

ԼԻԼԱ

ԿՍԿԻՇՍ

Առ ՆԵ

Անգուսպ խանգով տգորուած ,

Մի լուսաւոռ պապա՛յ

Կ'երագէի ինձ համար . . . :

Անխըզելի կապերով ,

Ամրապնգուած մե սիրոյն՝

Յոյսի-վա՛րդ մը կը փրքէր :

Բայց հիմա , Բու սառ-ժըպիսդ ,

Մեյամաղծոս սեւ-ֆողո՛վ մը՝

Կրսուերէ վե՛հ ճակասա :

Վհասանքի սուր հիւանցեր

Պինդ պրկելով կոյս-հոգիս՝

Կը կապե՛ն իր ճախւանքը :

Ու քախծի ջերմ խորեակը ,

Ծաղկի մը պէս օթակեզ՝

Կը քարեամե՛ գայն իսպառ :

Ամեն օր , նո՛ր կըսկիծներով ,

Կը հեծեմ ես անդադար՝

Արիւն-արցո՛ւնք քափելով . . . :

ԱՆԴՐԱՆԻԿ ԵՍԱՑԵԱՆ

ՎՐԻՊԱԿ

Մառկուիթի Կիւտէնեան նուագահանդէսը
յօդուածին մէջ 198, երկրորդ սիւնակ Յրդ.
տողին Ռօմանը կարդալ Թօմսըն :

ՆԱԽԱՆՁԸ

ԹԱՊԼՕ՝

Նախանձը բացի մահացու մեղքի հանգամանքէն, ունի նաև այնպիսի յատկութիւններ! զորս ունեցողը շատ անգամ ճշդ-ճիշտ ստորնութիւններու և ուրիշներու պարսաւանքին կ'ենթարկուի:

Զորօրինակ: Երեւակայեցէք երիտասարդ մը որ առանց ինքաշխատութեան, լոկ կարկոտաւոր հօրը շնորհիւ, լաւ կ'ուտէ ու կը խմէ, միշտ նորաձեւութեանց կը հետեւի ու ընկերութեանց մէջ կը ներկայանայ իրբեւանն բարեմասնութեամբ օժտեալ անձնաւորութիւն մը:

Եւ այս հետեւութեամբ ունենայ նաև բոլորն տեսնելու մը, դրացուհի օրիորդի մը դոյզն մէկ համակրանքը, փոքր մի ժպիտը վայելիլ, և . . . չաջողիլ:

Միանգամայն երբ տեսնայ թէ հեռաւոր թաղէ մը, օտարի մը կողմէ սիրաշահուիլը նոյն գոհարին, միմիայն, — գիտե՞ք թէ ինչի շնորհիւ —, միմիայն որսուած քանի մը վայրի բազերու, կաքաւներու և նապաստակի մը մատուցման շնորհիւ, որոնք կայտառ ու ճարպիկ որսորդ երիտասարդի մը կողմէն կը նուերուէին:

Կը տեսնա՞ք թէ ինչպէս կը յարձակին նախանձի մանրէները հէգ դրացի երիտասարդին տկար սրտին:

Ծաղորդ չաթիուն ճաշի հրաւիրուեցաւ դրացուհի Օր.ը հանդերձ ընտանեօք որ պիտի սարքուէր մեր խեղճ սրտաբեկեալին կողմէ՝ պատրաստուած որսի այլ և այլ բազմաթիւ կենդանիներէ:

Ինքն ալ պիտի ցուցնէր իր լաջ որսորդի յատկութիւնը ու ձեռնհասութիւնը:

Հացկերթիւն ճիշդ մէկ ոգեւորեալ միջոցին՝ լուսանկար մը ի յայտ կուգայ — չարածնի օրիորդին կողմէ պատրաստուած —:

Թէ ինչ էր լուսանկարին պարունակութիւնը: Իրենց անկիւնի բանջարատեւաւ վաճառ Եանգօյին խանութը:

Այս վերջինը ոտքի վրայ՝ որսորդի հագուստով երիտասարդի մը կողմէ գրամ կըստանայ: Փոխարէն՝ աշակերտին յովակը զամբիւղին մէջ լիցուած այլ և այլ որսերուն՝ զորոնք տանելու պատրաստ վիճակի մէջ է աշկերտը:

Ան որսորդի հագուստով ծպտեալ երիտասարդն է, որ ամենուրեք ծիծաղ կը պատճառէր . . . :

Մ. Ս. ԱԼԱՃԱՃԱՆ

ԱԶԳԵՐՆԻԴ ԼՈՅՍ

ԳՈՐԾԻ ԳԱԼԻՔ ՆՈՐՈԻԹԻՒՆ ՄԸ

Հագուիլ, շուիլ եւ ադամանդներով զարդարուիլ, ինչպէս նաեւ ՏԱՆԿԱՍԻՆԵՐ կոկեյլ ամէն կերպով, արանց քակցնիդ պարպելու

ԱՅԼ

ԱՊԱՌԻԿ

Մայր ես, աղջկանդ օժիտը կը մտածես՝ դիմէ՛.

Օրիորդ ես, շէք և աժան հագուիլ կուզես՝ դիմէ՛.

Երիտասարդ ես և շիքը կը սիրես՝ դիմէ՛.

Տարեց ես և ցուրտէն պատուաբաւ կուզես՝ դիմէ՛.

Տղաքներ ունիս որոնց պիտոյքը գանկը կը ճաթեցնեն՝ դիմէ՛.

Ամուսնացու աղջիկ ունիս՝ ըրզակներու պէտք ունիս՝ դիմէ՛.

Եկածը կաղանդ, է նուէրներ գնել կը փախաբիս՝ դիմէ՛.

Տարին քանի մը անգամ հովանոց գնելէն զգուած ես՝ դիմէ՛.

Ձեռքդ պարսպ ճամբայ քալել չես սիրեր՝ դիմէ՛.

Կուզես տունդ կոկեյլ ճաշակաւոր կարասիներով՝ դիմէ՛.

Առանկարգ և տոկուն գուլպաներու պէտք ունիս՝ դիմէ՛.

Կուզես շէք, ճաշակաւոր և լաւ տեսակ փողկապներ ունենալ՝ վերջապէս կուզես որոյց ցզուրս հագուիլ, շքուիլ, պնտուիլ.

դիմէ՛ միմիայն

“ՀԷՐՃԱՅԻ” ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ՄԵՆ ՇՈՒԿԱՅ, ԳՈՒԼՈՒՄԸՆԼԱՐ ԲՈՂՈՅ ԹԻՒ 13

ուր պիտի գտնես ամէն տեսակ հագուստի, ճերմակեղէնի, ֆանթեզիի, ադամանդի, ժամացոյցներու, չղթաներու և ամէն տեսակ կարասիներու ճոխ մթերք մը:

ՎՃԱՐՄԱՆՑ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ապառիկ գնողներու համար հարիւրին 20 կանխիկ և մնացեալ գումարին հարիւրին 5ը շարաթուկան վճարմամբ.

2. Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ.

3. Կանխիկ ծախուած ապրանքներէն միմիայն ադամանդեայ գոհարեղէնները երբ գործածուած բայց անվնաս մնացած ըլլան, հարիւրին 10 զեղչով, իսկ ապառիկ ծախուած և անվնաս մնացած միմիայն ադամանդեայ գոհարեղէններն ալ հարիւրին 15 զեղչով եւ կ'առնուին:

ՍԱՆԱՐԵՆՈՒԹԵՒՆ 24.6.6

18-30

«ՀԱՆՐԱԳԻՏԱԿ»-Ի ԹԵՐԹՕՆԸ 8

Հեղինակ՝ ԼՈՒԻ ՊՈՒՍԵՆԱՌ

Թարգմանեց՝ Յ. ՏԵՐ-ՅԱԿՈԲԱՆ

10,000 ՏԱՐԻ

ՍԱՌՆԱԿՈՅՏԻ ՄԸ ՄԷՁ

Մեծ-ծերունի պարոնը սապէս չարունակեց իր զարմանալի պատմութիւնը :

— Այս յաղթական արշաւով Արեւմուտքի մէջ տարածուեցաւ Չինական քաղաքակրթութիւնը որ իր մասնաւոր նկարագիրը դրոշմեց հոն և ծաղկեցաւ այն աւերակներուն վրայ զորս դուք ձեր քաղաքացիներուն կը սեփականէք : Ասիոյն, Եւրոպայի և Հիւսիսային Աֆրիկէն, ամենքն ալ Չինաստան եղան և քիչ ժամանակի մէջ դեղին ցեղը բազմացաւ անհամեմատ կերպով, մինչ Մաս-Չիններու թիւը անսովոր կայուն կը մնար յաւիտենապէս : Աւելի ետքերը, դեռ անորոշ դարու մը մէջ, ուր չնանիր մեր ժամանակագրութիւնը և որ սակայն չանցնիր 2400 տարին . . . :

— Ժամանակագրութեան համար դիտել պիտի տամ ձեզի թէ դուք պահած էք մեր դրութիւնը, այսինքն այս ճերմակներուն դրութիւնը զոր այնքան անողոք կերպով ջնջած էք, ընդմիջեց Մ. Սենթէլ :

— Անտարկտիդայ, բայց այդ ջնջումը ուէ խղճի վրդովմունք չպատճառեր մեզի : Մընաց որ ժամանակագրութեան դրութիւնը միակ բանն է զոր պահած ենք իրենցմէ, ինչ որէ : 2400 տարիի չափ առաջ մեր երկրագունդը ենթարկուեցաւ մթնոլորտային, երկրաքանակային և արեգակնային անակնկալ չրջափոխութիւններու : Սարսափելի երկրաշարժ մը տեղի ունեցաւ որ տեղէն խախտեց երկրին կարծր մակերեսը, ծովեր և երկիրները իրենց տեղերը փոխեցին, հարաւային և հիւսիսային բեւեռները վեր ի վայր շրջեցան, եղանակներուն մէջ տեսակ մը չփոթութիւն եկաւ և ընդհանրապէս առաջ եկաւ ջերմութեան աստիճանի նշանակելի անկում մը, ցրտութիւն մը : Հիմա, սանկ մը կ'անցնիր այս առեւի դէպքերուն վրայ,

յետոյ երբ փափաքիս, զանոնք աւելի գերապէս և մանրամասն բացատրելու համար : Սառույցները լեցուցին Հիւսիսի և Հարաւի երկիրները և մնացին նաեւ այս երկիրներուն վրայ զորս գրաւած էին մեր նախնիք : Այն ատեն մեր նախնիք ստիպուեցան աւելի բարեխառն կողմեր դադրել և հիւսիսի կողմերը մտած են միայն Մաս-Չինները, որոնք ցարդ կ'ապրին այդ անբերրի երկրին հետ տաժանքոտ կռիւով մը : Մեր նախնիք փախչելով Եւրոպայէն որ սառուցեալ երկիր մը եղած էր, չիտակ Լեփրիկէ գացին :

— Բայց ինչպէս անցան Միջերկրական ծովէն որ այդ երկու ցամաքները կը զատէ . . . :

— Օ՛հ, այդ ծովը չկայ հիմա, ան անհետ եղաւ յիշած երկրային մեծ չրջափոխութեան միջոցին : Այս նոր գաղթալայրին մէջ մեր նախնիք գտան նախնական ցեղ մը, սեւ կրնամորթով, քաղցրաբարոյ, հիւրասէր, խաղաղ և շատ աշխատասէր ցեղ մը, որ փոխանակ ճերմակներուն պէս Չինացիները իրր թշնամի ընդունելու, եղբոր պէս մեծարեցին զանոնք, իրենց երկիրը անոնց հետ բաժնեցին և խիստ մեծ համակրութիւն մը ցոյց տուին : Այն տոտեն մարդաբանական հրաշալի երեւոյթ մը առաջ եկաւ : Դեղիններուն և սեւերուն միջև յաճախակի ամուսնութիւններ սկսան որոնք անսովոր բեղմնաւորութիւն մը ունեցան և խառնածնութիւնը, որ սերնդագործման կը փնտռէ, ընաւ հետք ցոյց չառաւ երկար ժամանակներ, և բեղմնաւորութիւնը շարունակուեցաւ : Երկու ցեղերուն միջև փոխադարձ իւրացում մը, խառնուրդ մը առաջ եկաւ, որուն մէջ դեղին ցեղը տիրող տարր մը չեղաւ, այլ հաւասար արդիւնք մը տեղի ունեցաւ : Միոս կողմէ երկու ցեղերն ալ օգտուեցան այս խառնուրդէն որ հիմնալի

արգասիքներ ունեցաւ : Այսպէս , սեւը իր մարմնական ուժը , իր անընկճելի տոկունութիւնը , իր հասարակածային երկրի յարմարութիւնը , տեղական հիւանդութիւններէ զերծ մնալու յատկութիւնը , իր առոյգ և վեհանձն արիւնը տուաւ : Իսկ դեղինը դժբաւ մանաւանդ իր մտքի առաւելութիւնները , որ դարաւոր քաղաքակրթութեամբ մը բարգաւաճած էր , իր արուեստները , գիտութիւնը , ճարտարութիւնը , բազմադիմի և խորամանկ ուղեղ մը , անընկճելի կամք մը և ընկերային կատարեալ կազմակերպութիւն մը : Չինական արիւնը որ դարերու ընթացքէն յոգնած էր , թարմ արիւնի մը հետ խառնուելով նոր կեանք , նոր զարկ ստացաւ :

— Մէկ խօսքով մարդկային պատուաստ մը , յարեց Մ. Սենթէլ տակաւ ալ աւելի հետաքրքրուած : Պատուաստ մը որուն արդիւնքը հրաշալի է : Բայց այս բանը կը պատահի Մ. ֆրիկէի մէջ ուր այժմ կը գտնուինք և զոր Արեւմտեան Չինաստան կը կոչէք : Հետաքրքիր եմ գիտնալու թէ այս ցեղական փոփոխութիւնը երկրագնդին միւս մասին մէջ ալ եղած է , այն տեղերը ուր հաւանաբար կը կոչէք Կեդրոնական Չինաստան , Արեւելեան Չինաստան : Աս հեռաւոր երկրներուն բնակիչներն ալ ձեզի պէ՞ն են :

— Կատարելապէս նման :

— Շատ տարօրինակ է ատ :

— Բնաւ , եթէ ըսեմ թէ ձեր կրթման արհեստին պէս անսահման չէ մեր երկրին արդի բնակութեան սահմանը : Երկրաբանական չորջափոխութիւնը ամփոփած է բնակչութիւնը , քանի որ շատ տեղեր ցարդ և անբնակելի դարձած են : Մնաց որ , ձեր գիտցած Չինաստանէն , որ մեր նախնաց օրրանն էր , աւելի արեւելք կը գտնուէր կային ուր սե ցեղի մարդիկ կը բնակէին . . . :

— Իրաւ էք , Մեծ-ձերունի պարոն : Հիմա կը հասկնամ թէ ինչպէս ամեն կողմ տեղի ունեցեր է այս խառնուրդը : Արեւելեան Չինաստանի կողմերուն մարդիկը , այսինքն Աւստրալացիները , Բաբուները , նոյն իսկ Բոլովնիացիները դաշնակցած ըլլալու են Չինացիներուն : Յետոյ դեղին ցեղի մարդոց ամբողջ , նոր երկրներու մէջ տարածուած ատեն , ամերիկեան սեւամորթներուն և Անդեզեաններուն զեղեցիկ սեւերուն հանդիպած ըլլալու են : Աֆրիկէի և Ամերիկայի միջև նոր երկրներ եկած ըլլալու են չորջափոխութիւնէն , ինչպէս կարծեմ ըսիք , որոնցմէ այս վերջին ցեղին սե տարրը մնալուն յարաբերութեան մէջ գտնուած է , այնքան որ խառնուած է հնդկներուն , ու

րոնք ըստ իս , հին Մոնկոլներուն մէկ ճիւղին շարունակութիւնն են :

— Ձեր ենթադրութիւնը կատարելապէս ճիշդ է և երկրին փոփոխութիւնն ալ նոյնպէս , այնպէս որ այսօր կարելի է երկրագունդիս չորջանը ընել առանց հաստատ հողը ձգելու :

— Ինչ կըսէք . . . ահա ճշմարտապէս հրաշալի բան մը , որ սակայն կը չփոխեցնէ ժամանակաւ իմ ըրած ենթադրութիւններս ապագային համար : Հիմա ինքզինքիս կը հարցնեմ թէ ինչ պիտի ըսէին անոր որ այն ատենները ելլար ըսեր թէ « ապագան Չինացիին և Սեւամորթինն է , թէ քանի մը հազար տարիներու մէջ կարելի պիտի ըլլայ կատարել աշխարհի չորջանը հասարակածային համաստիճան ցամաքէն . . . » :

— Այդ ըսածդ ճշմարտութիւն մըն է զոր շատ հաճոյք պիտի զգամ երբ ձեզի կատարել տամ Մ. Սենթէլ : Մի՛ վախճար դրօսալի և մի և նոյն ժամանակ կարճ ճամբորդութիւն մըն է . . . :

— Օ , կը հաւատամ որ աներեւակայելի կերպով արագ և կատարեալ միջոցներ ունենալու էք փոխադրութեան համար . . . :

— Վայրկինական են գրեթէ . . . :

— Միշտ ապշութեան մէջ կը թողուք ինծի Մեծ-ձերունի պարոն : Բայց կը հետաքրքրէք ալ , ինչ , ծովերէ չպիտի երթանք :

— Հազարաւոր տարիներէ ի վեր ատանկ բան չկայ . ատ բանը աւանդութեանց մէջ միայն կը պատմուի . . . :

— Ձեզի պէս մարդիկը սակայն պէտք եղած հանգստութեամբ չեն կրնար ճամբորդել ցամաքէն :

— Ծիշդ ըսիք , նախածին . . .

— Ուրեմն օդերուն մէջէն է որ մեր թռիչքը պիտի առնենք . . .

— Գուշակեցիք . . .

— Օղապարիկի մէջ գուցէ . . .

— Կը կարծէք : Մեր նախաձեռնութեան նախաձեռնը անգամ այդ անյարմար մեքենաները , ձեր օդապարիկ ըսածները 20 դար գոյութիւն ունեցող թանգարաններուն մէջ տեսած են :

— Ինչ որ ալ ըլլայ Մեծ-ձերունի պարոն , պիտի ընկերանամ ձեզի օդին մէջ :

— Հարկաւ և պիտի ճամբորդենք այնքան արագ , որքան որ լոյսը պիտի երթար մէկ տեղէ մը միւսը :

(Շախուկալեղի)

Արտօմատէր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Տպագրութիւն Մ. ՍԱՐԵԵԱՆ

Պապ.Ալի Գաւաթի Թ. 38

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԼԱՆՊԵՐՁԵՂԻՆԱՅ

Առանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԻՐՄԵՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Կ. Պոլիս, Սուրբան, Հանսա, Թօփալեան խան

Ոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանայ տու-
կունութեամբ և դիներու անմրցելի ա-
ժանութեամբը շահած է բոլոր իրեն դի-
մող յաճախորդաց վստահութիւնը, այս
անգամ ձմեռուան յատուկ ընթեր հա-
գուստներու, կանանց քեշքոյիներու և
տղայոց շիք և գիմաղկուն փոքրիկներու
ճոխ մթերք մը պատրաստ ունի, որ
ջերմապէս կը յանձնարարուի ամէն ա-
նոնց, որոնք պէտք ունին ներկայ եղա-
նակին հագուստի և ուրիշ նմանօրինակ
պիտոյից.


Սակաքկութիւն չկայ, թիւը 2 զըշ է.
Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին.

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԹԷՑԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԽԱՐՄ ԵՆ



ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԸՆՏՐ, ԱԺԱՆ

ԵՒ

ՀՈՏԱԻԷՏ ԹԷՑԵՐ

Կ. Պոլիս, Պանդեփափու, ձեյալ-Պեյ խան, քիւ. 10



ԱՆՏԵԼԻՊ
ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՆՈՒԱԳԱՐԱՆԱՑ ԵՒ ՊԵՏՈՅԻՑ

ՄԱՍՆ ԱԻՈՐԱԲԱՐ

Ֆոնոկրաֆի եւ Գլաններու Կրամօֆոնի եւ Երկկողմ Բլագներու : Կեդրոնա-տեղի Պանդե Դաբու, Հանի Պեքիւ Էֆենտիի կից, Եալթըզ խանի տակ քիւ. 2 : Մասնաճիւղ Պանդե Դաբու քիւ. 52 :

Վաճառատանս 30 տարիներէ ի վեր ծախած ապրանաջ տուկունութեան և թէ նորոգութեան մասին շահած համբաւը բազմաթիւ

յաճախորդներուն ծանօթ ըլլալով, կը փութանք յայտարարել թէ՛ այս անգամ նոր դրութեամբ և կատարելագործեալ լաւ տեսակ Կրամօֆոններ և երկու կողմն ալ զաւաղատ եղանակներով Բլագներ բերել տուած ենք, և կրնանք մրցիլ հրապարակի վրայ գտնուած բոլոր նմանօրինակ ապրանաջ հետ, թէ՛ տուկունութեամբ, ձայնի առաւելութեամբ և թէ՛ աժանութեամբ : Գուառներէն եղած յանձնարարութիւնք կը կատարուին ամենայն ուշադրութեամբ և հոգածութեամբ :

Անգամ մը փորձելը բուսական է հոտաւորելու համար մեր ըսածները Դիմել՝ կեդրոնատեղին :